№ 211 Նոյեմբերի 12 (24) 1881 Նոյեմբերի 12 (24) № 211

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ. կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրությիր դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Բագուից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընտրութիւնների հետևանքը Գերմանիայում։ Ֆրանսիական հանրապետութիւնը և Գամբէտտա։ Արտաքին լուրեր։—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Թիւրքիայից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Հոկտեմբերի 27-ին

Բագուի հիւսիս-արևելեան կողմում գտնվում է Սաբունչի գիւղը, որի շրջակայքում գտնվում է սև նաւթի հանք։ Սև նաւթ ստանալու համար պէտք փորել գետինը քսան սաժէնից ընկած մինչև ութսուն, որտեղից նա խփում է աղբիւրի պէս և գետնի երեսից էլ բարձրանում մինչև տասն ու հինգ և էլ աւելի սաժէն և այսպէս նա աղբիւրի պէս խփում է շարունակ մի տարի ու կէսից էլ աւելի։ Ուրեմն մեր Բագուի նաւթի հորերի խորութիւնը համեմատելով ուրիշ երկիրներում գտնվող հորերի խորութեան հետ, ինչպէս օրինակ Ամերիկայում, որտեղ հորերի խորութիւնը հասնում է մինչև երկու հարիւր սաժէն, շատ չնչին է։ Իսկ Ամերիկայում առաջ այնպէս քիչ նաւթ չը կար, ինչպէս հիմա, այլ առաջ ինչպէս և Բագուի մէջ, այնտեղ ևս նա շատ առատ էր, բայց որովհետև բնակիչները խնայողաբար չարդիւնահանեցին, այդ պատճառով էլ երկար չը տևեց նաւթը. այժմը կարելի է ասել մեծ նեղութիւն են կրում ամերիկացիները այդ կողմից։ Եւ այդ մեծ կորստի առաջն առնելու համար, թէպէտ և ուշ, նրանք այժմս կարգադրել են ուրիշ կերպ. այն է երկու կամ երեք հարիւր քառակուսի սաժէն տարածութիւնում չինել միայն մէկ հոր։

Ահա այս խղճալի դրութիւնն է տպասում և մեր Բագուն, որի պատճառը նոյնը կը լինի, ինչպէս որ Ամերիկայինը, այսինքն նաւթի անխնայ և անկարգ գործածելը։ Բայց ափսոս որ մեր քաղաքացիք չեն կարողանում ուրիշից օրինակ վեր առնել։

Բագուի բնակիչների եթէ ոչ մեծ մասը, գոնէ կէսը այժմս պարապում են նաւթի գործով և մինչև անգամ ամենայեսին մանրավաճառը պարտքով էլ հոր է քանդել տալիս Սաբունչիում կամ Բալախանում, որը կից է առաջինի հետ։ Այժմս այդ նաւթի հորերի թիւը այնքան շատացել է, որ համարեա երկու կամ երեք հարիւր քառակուսի սաժէն տարածութիւնում կան մինչև եօթ և աւելի հորեր. երբ մէկին հարկաւոր է նաւթ և նա բացում է իր հորի բերանը, որ դուրս թափվի նաւթը, այդ ժամանակ նրա դրացին, մտածելով թէ չը լինի թէ իր հորը թափվող ստորերկրեայ նաւթի աղբիւրներից հիւթը խառնվի այն բերանը բաց հորի աղբիւրների հետ, բացում է իր հորի բերանն էլ և նաւթը ի զուր փչացնում, վնասելով իրան և ապականելով փողոցը։ Մինչ կարելի է ընութեան հարստութեան հետ այդպէս անխիղճ վարվել, կամ մինչ ապականելով փողոցը, չեն մտածում, որ իրանց կայքը վտանգի է ենթարկվում, մինչ նրանք չեն վախենում հրդեհից։ Բայց մեր նաւթատէրերը այդ կողմից շատ անհոգ են, որի հետևանքը շատ ստոկալի է. հրդեհի ժամանակ քոցերին զոհ է լինում ոչ թէ մէկ հոր, որից սկսվում է հրդեհը այլ շատերը։ Ահա, օրինակի համար, անցեալ օգոստոս ամսի 21-ին առաւօտեան ժամի վեցին Սարուխանովի պ. Կրասիլնիկեանցի հորի շոգեկաթսայի տակը վառելուց պատահում է հրդեհ, ինչպէս նրա գործակատարը ասում է շոգեկաթսան իր մէջ պարունակող տունը գազով լցվելու պատճառով։ Բայց որովհետև հորի ծածկոցը և չորս կողմը շաղախված են նաւթով, վառնորդ քոցը այնպիսի արագութեամբ է շրջապատում ամեն բան, որ չեն կարողանում հրդեհը հանգցնել ոչ մի կերպով։ Մի և նոյն ժամանակն էլ նաւթը սկսում է հորից դուրս հանել աղբիւրի պէս և քոցը, ի հարկէ, աւելի ստոստկացնում։ Արանից այրվում են վեց ուրիշ հորեր, բայց բարեբաղդաբար միմիայն ծածկոցներն են այրվում և մեքենաները փչանում։ Իսկ պ. Կրասիլնիկեանցի հորի հրդեհը մի շաբաթից աւելի էր շարունակվում և ոչ մի հնարով չէին կարողանում հանգցնելու։

Այս ստոկալի վտանգը առաջինը չէ և երևի վերջինն էլ չէ լինելու. բայց այնու ամենայնիւ կարելի է այնպէս անել, որ հրդեհի ժամանակ գոնէ մէկ հոր այրվի և ոչ եօթը, ինչպէս հիմայ է լինում։ Ահա ինչպէս կարելի է այդ անել. իւրաքանչիւր հորի համար նշանակեն գոնէ հարիւր կամ հարիւր յիսուն քառակուսի սաժէն տարածութիւն, որպէս զի մէկը այրվելուց, միւսներին էլ վնաս չը հասնի։ Եթէ այդ տարածութիւնում լինեն մի քանի հորեր, այն ժամանակ կարելի է կամ մէկ տիրոջ վրա ծախել, կամ ընկերութիւն կազմել և միւս հորերը ծածկել։ Իմ կարծիքով այսպիսի հորը աւելի օգուտ կը բերի և աւելի երկար կը տևի, քան թէ երբ հորերը այլ և այլ տէրերի ձեռին են։

Ուրեմն քանի որ մեր քաղաքացիք կը շարունակեն արդիւնահանել նաւթը այնպէս, ինչպէս մինչև հիմայ արել են, նրանք միշտ կը վնասվեն և շուտով կը հասնեն այն դրութեանը, որին և ամերիկացիք են հասել։ Իսկ եթէ չեն կամենում իրանց վնասը, թող փոխեն իրանց արդիւնահանութեան սիստեմը և աւելի խելացի և խնայողաբար վարվեն ընութեան հարստութեան հետ։ Ի զուր են կարծում, որ ընութեան հարստութիւնները անսպառելի են։

Թ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 28 հոկտեմբերի

Վաղուց էի ուզում խօսել քիչ մը ձեր վարժապետական ժողովի մասին. ամեն կողմից էլ դադար չեն տալիս ինձ հարցուփորձ անելով միշտ այդ ենթադրեալ գալի ժողովի մասին։ «Ինչ մարդիկ են կարգադրիչ ժողովի անդամները. ով է Շահպարոնեանց, ով է Լեանդուլով, ով է խոսրովեան, և այլն։» Ահա ուրա են այն հարցերը, որոնցով ինձ չարչարում են այստեղ, ցանկանալով գաղափար ստանալ ռուսահայ ինտելլիգենցիայի պարագլուխների և վարժապետական ժողովի ապագայ վիճակի վրա։ Որովհետև սոցա հետ խօսածներս մանաւանդ օգտակար է լսել նոյն իսկ այդ կարգադրիչ ժողովի անդամներին, վասնորոյ պարտաւորութիւն եմ համարում կրկնել այստեղ այն, ինչ իմ կարծիքս է այդ ժողովի գործունէութեան և ունենալիք արդիւնքի մասին։

Շահպարոնեանցը մի բժիշկ է, Լեանդուլովը մի պաշտօնեայ, խոսրովեանը մի փաստաբան, Աբիսողոմ Յովհաննիսեանցը մի մասնագէտ գիտնական, որի համար աւելի հետաքրքիր է այս ինչ քիմիական ֆորմուլա, քան թէ որ և է մարդկային վարժական ճշմարտութիւն։ Ահա ուրա են, որոնցից կազմված է այն կարգադրիչ մասնաժողովը. որը պիտի պրոգրամ պատրաստէ, նիւթեր մշակէ, ուղղութիւն տայ, ծրագիր շինէ այն ժողովի համար, որը պիտի տեղի ունենայ եկող տարի Թիֆլիսի մէջ. էլ ինչ է մնում հասկանալ թէ ինչը կը լինի այդ ժողովի արտադրած արդիւնքը և Կովկասի հայոց ուսումնարանների բարենորոգումը...

Զարմանալի էակներ են այս մեր հայերը. աշխարհ կը փոխվի, բայց նոքա խելքի չեն գայ ու չեն սովորի անցեալից օգուտ քաղել։ Դեռ երկու օր է անցել հնագիտական ժողովի վերջանալուց յետ. ամեն կողմից լսվում է թէ այդ ժողովը չունեցաւ ցանկացած արդիւնքը և չը հասաւ ենթադրած նպատակին, որովհետև նախապատրաստութիւնները վատ եղան, որովհետև կարգադրիչ մասնաժողովը չէր կազմված գործին յարմար անձինքներից և այլն։ Եթէ Բագդէի, Վէյդենբաումի, Բայերի, Բաքրաձէի պէս մասնագէտներից կազմված յանձնաժողովը չը կարողացաւ համապատասխանել հնագիտական ժողովի պահանջներին, էլ կարող էք երևակայել թէ որչափ պիտի համապատասխանէ մի բժշկի, մի պաշտօնեայի, երկու էլ զանազան ճիւղերի մասնագէտների ընտրութիւնը հայ ուսումնարանների համար կատարելի հիմնական վերանորոգութեան։

Երբ երկու տարի առաջ Ախալցխա էի ես, իմացայ որ Թիֆլիսի նահանգի հայ ուսումնարանների թեմական տեսուչ պ. Բարխուդարեանցը ոչ թէ միայն չը գիտէ թէ քանի ուսումնարան կայ իր թեմի մէջ, այլ ևս նա նոցանից շատերը զոհէ մի անգամ չէ տեսած, թէպէտ այդպիսի այցելութիւնների համար նա ըստանում է տարեկան 800 բուբլ. իսկ եթէ պ. Բարխուդարեանցը այդքան քիչ գիտէ ուսումնարանների դրութեան վրա, եթէ այդպէս է եղել թեմական տեսչի հոգացողութիւնը իրան յանձնած թեմի վրա, էլ կարող էք երևակայել մնացածներին։ Ասեցէ՛ք խնդրեմ, ընտրվելով անդամներ կարգադրիչ մասնաժողովի ինչ նորութիւն կարող են հաղորդել նրանք գաւառական ուսումնարանների անհրաժեշտ պէտքերի և պահանջների վրա, գաւառական ուսուցիչների և տեսուչների ունեցած կարծեաց ու հայեցուածքի մասին, գաւառացիների զգացած գործնական և անտեսական կարեաց վրա, գիւղական և քաղաքային ուսումնարանների ապահովութեան աղբիւրների և եղանակի վրա, հայ ուսուցիչների նիւթական և բարոյական վիճակը ապահովելու և ապագան երաշխաւորելու համար և այլն և այլն։ Ի սէր Աստուծոյ մի բժիշկ, մի պաշտօնեայ և երկու էլ չոր ու ցամաք մասնագէտներ ինչ յարմարութիւն կարող են ունենալ այս ամենի համար...

Իմ համեստ կարծիքով եթէ եկող տարվայ վարժարանական ժողովի գլխաւոր նպատակը չը պիտի լինի լոկ Թիֆլիսի մի քանի ծխական ուսումնարանների վրա պատասխանելը, այլ պիտի լինի գաւառների հայ ուսումնարաններին օրինաւոր և նպատակայարմար ուղղութիւն տալը, այդպիսի ժողովի համար նախապատրաստութիւններ տեսնողները ոչ թէ պիտի լինեն սրանք, այլ հմուտ գաւառագէտ ուսուցիչներ։ Ահա սոքա միայն կարող էին լինել գաւառական ժողովի կարիքները և ուսումնարանների պահանջները հասկացողը։ Այսպէս խօսելով մենք բնաւ չենք ուզում ուրանալ վերոյիշեալ մարդկանց ունեցած արժանաւորութիւնները իրանց արհեստի մէջ. նոքա որչափ էլ հմուտ լինեն իրանց սեփական գործի մէջ, այնչափ էլ սակայն անյարմար կարող են լինել այնպիսի հարցեր վճռելու համար, որոնց մէջ շատ առաւել օգտաւէտ կը գտնվեն այնպիսիները, որոնք թէպէտ պակաս անուն ունեն, սակայն յիշեալ գործի մէջ աւելի յարմարվող և աւելի պէտքական մարդիկ են։

Դեռ այս հարցի միայն մի երեսն է, որի վրա ուշադրութիւն ենք դարձնում, բայց ինչ կասեն նոքա, եթէ այդ վարժապետական ժողովի համար պարտաւորութիւն դնէինք իր նիստերը օգտաւէտ անել ոչ միայն ռուսահայերի համար, այլ տաճկահայերի ևս։ Մինչ կարգադրիչ մասնաժողովի միտքը ոչ մի անգամ չընկաւ յիշել և իր տաճկահայ եղբայրներին էլ, հրաւիրելով նոցանից այնպիսի մարդիկ, որոնք հաւասարապէս տեղեակ են ինչպէս ռուսահայերի պահանջների և կեանքի հետ, այնպէս և տաճկահայոց. պ. պ. Մարկոս Ազարէկեան, Յարութիւն Քէչքէկեան մինչ կը մերժէին մասնակցել մի այդչափ արդիւնաւոր համազգային գործին։ Բայց ոչ. ամեն մի քանի մէջ, որ պիտի տեղի ունենայ Թիֆլիսում ազգային թէ հասարակական գործերի ասպարիզում, պիտի ներս մտնեն մի և նոյն անձինք, կարծես թէ էլ ուրիշ մարդիկ չը լինեն այդ տեղ։ Հոգաբարձութիւնը Ներսիսեան ուսումնարանի մէջ, այլ և այլ հիմնարկութիւններ Թիֆլիսում,—միշտ նոյն խումբը։

Ինչ և իցէ, մեր նպատակը ուրիշ քանի վրա խօսելը չէ, բացի միայն նոքա, որ այդ հուսկապուր վարժապետական ժողովի գործը մի որ և է օգային փամփուշտով չը վերջանայ, այլ ունենայ իր արդիւնքը տասնեակ հազարաւոր գաւառական հայ մանուկների համար, որոնց ծնողքը այնչափ անմեղ հաւատով պահ են տալիս իրանց երեխայոց բաղդը և ապագան մի քանի տաս մարդկանց խղճին։ Մեզ համար ցանկալի է միայն, որ այդ խիղճը նոյնչափ յանցաւոր և մեղապարտ չը լինի հայ ազգի ապագայի առաջ, ինչպէս եղած է մինչև հիմայ չնորհիւ անփոյթ թեմական տեսուչների, անկարգ և անկանոն պրոգրամի, անգործադրելի և անհնարաւոր առաջարկների, անպատրաստ և անձեռնհաս դասատուների և այլն։ Ահա սա է մեր գլխաւոր հոգը, որի վրա պարտաւորութիւն համարեցինք երկար խօսել արդէն երկու տարի առաջ «Մշակի» մէջ մի շարք յօդուածներով Ախալցխայից գրած «Ընդրամի խնդիր» վերնագրով։

Բայց նախ քան մի որ և է բան անելը, հարկաւոր է ամենից առաջ ճիշդ և կատարեալ հաշիւ տալ կարգադրիչ մասնաժողովի անդամներին լրագրական միջոցով իրանց այն ամեն որոշումների մէջ, որ կայացրել են նոքա իւրաքանչիւր նիստի ժամանակ, այս ինչ այն ինչ հարցի վերաբերմամբ։ Եթէ այս էլ չը պիտի անեն, այն ժամանակ կը նշանակէ ամեն պատասխանատուութիւն իրանց վրա են առնում. դա էլ վատ չէ, եթէ իրանց վրա այդչափ վստահութիւն ունեն....

Մի խօսք էլ մի այլ խնդրի վրա։ Ունենալով աչքի առաջ Ներսէս պատրիարքի նման մի անձնուրաց հոգևոր հովուի գործունէութիւնը, աչքի առաջ ունենալով այն հակայական ջանքերը, որոնցով նա օգնութեան է հասնում ամբողջ երկու—երեք միլլիոն իր հօտի ամենապէտքաւոր քաղաքական և կրօնական կարեաց և պահանջներին, այն էլ առանց մի կոպէկ ապատ փող ունենալու իր տրամադրութեան տակ, աչքի առաջ ունենալով այդ առաքելատիպ մարդու անձնական վերջին յուսահատ տկարութիւնը, որը արհամարհելով սակայն նա կարողանում է ձեռք հասցնել ամեն բանի, ամեն կարգադրութեանց, ինչպէս մի հանճարեղ հրամանատար կարողանում է հետամուտ լինել ու հասնել լայնատարած դաշտի վրա կատարվող պատերազմական անցքերի իւրաքանչիւր մանրամասնութեանց, աչքի առաջ ունենալով, ասում եմ, Ներսէս պատրիարքին, որը ամենաճարպիկ քաղաքական էքզիլիբրիստի նման, մի կողմից պահում է իր ձեռքին Ցանկահայաստանի մէջ չահ ունեցող զանազան տէրութեանց ձգտումների հաւասարակշռութիւնը, իսկ միւս կողմից գաղափար և ինիցիատիվ է տալիս ամեն օր իրան այցելող տասը տեսակ քաղաքագէտ և պուբլիցիստ օտարազգի մարդկերանց,—մարդ չը գիտէ թէ ինչպէս զսպէ իր թոյնը և բռնադատէ իր զայրոյթը երբ տեսնում է թէ այդ մարդու, Ներսէսի դէմ օրոգայթներ լարող մարդիկ են գտնվում։

Գրիգոր Նիկողոսեան